ՆԻԺ ԵՒ ԱՐԷԼ

Լոմբարդո-Ռիեան Աբրաբամ ամսագրոյ.

Օրինական դպրոցն Նիժու, իւր առաջին տարուայ շրջանը լրացնելով՝ երկրորդ տարին մտնելու բաղտաւորութիւն ունեցաւ. արդարև բաղտաւորութիւն ասելու իրաւունք ունիմ, որովհետև շատերը՝ թէ նոյն բնակիչներից, և թէ՝ ուրիշները՝ յոյս չունէին որ դպրոցը մի կամ երկու ամիս աւելի շարունակելու է անվրդով իւր գեղեցիկ ընթացքը՝ Խնամատար Հոգաբարձուաց աշխատասիրութեամբ. ես իմ դիտողութիւնս տեղական ընակչաց վերայ այսպէս ունիմ, թէ՝ նոքա տգիտութեան և անուսումնութեան հարկից ստիպուած, կուրօրէն խորխորատների մէջ էին գլորվում ակամայ կամօք, իսկ այլոց վերայ այլ իմն եղանակ. Վերոյիշեալ դպրոցը այժմ իւր երկրորդ շրջանի մէջ՝ ես քան զևս յառաջադիմութեամբ պէտք է փայլի, վասն զի ուսման ճաշակը արդէն սակաւ ինչ սուած են մեր Նիժու ազգայինք. Աշակերտաց թիւը օր աւուր աւելանում է՝ և բաւական յառաջադիմութիւն է գտնվում աշակերտաց մէջ, և հոգաբարձուք ազգասիրաբար իւրեանց հոգացողութիւնը կրկնապատկել են դպրոցի վրայ՝ նորա բոլոր կառավարութիւնը բարեկարգութեան մէջ դնել.

Միւս շրջակայ բնակիչները տեսնելով նոցա փայլը և հոգը, և ուսման յառաջադիմութիւնը, նոյնօրինակ ընկերական միաբանութիւն կազմելու վրայով խօսակցութիւններ է լինում, ինչպէս այժմ Արկէլու մէջ՝ քանի մի ազգասէրք ուսման եռանդով վառուած ի գլուխ հանեցին իրանց դիտաւորութիւնը դպրոցի բացման համար, և արժանացան Վեհափառ Կաթողիկոսի օրհնութեան Կոնդակաւ օրհնուելու. Երբ նոր ի նորոյ՝ ուսման եռանդը արծարծվում էր ժողովրդոց մէջ՝ այս գեղեցիկ գործի ընթացքին խափանարար լուրեր հնչվեց՝ որպէս թէ՝ դպրոցը նիւթական միջոցներ չէ ունենալու իւր յաջողակ յառաջադիմութեան համար, և թէ՝ ժողովուրդը դպրոցաց կառավարութեան մասին՝ միանգամայն ունենալու է հոգի՝ որ արդիւնքն. Ես ևս ըստով բաւականին զայթակղուած արհամարհում էի նոցա դիտաւորութիւնը՝ ունկնդիր լինելով անհաստատ ձայներու՝ որ նոքա եկեղեցական կառավարութեան նիւթական միջոցին, որպէս թէ՝ հարուած հասցնելու, դիտումն ունին, և պարսաւում էի զնոսա մեղադրանք. բայց այժմ տեսնում եմ, որ ամենը ազգին սիրտը և ոգին պղտորող՝ և աղգայնոց եռանդը ցրտացնող ձիրներ են եղել, հակառակ գաղափարի տէր անձներից յառաջացած, վասն զի անհնարին է նկատել կամ գոնէ մոքէ անցկացնել այդպիսի այլ ընդ այլոյ միտքեր, մեր սիրելի ազգային եղբարց մէջ. Պինդրեմ Աբրաբամ ամսագրից իմ այս նամակը տպագրութեամբ հրատարակելու արժանի համարի՝ ի խրախոյս մեր Նիժու բարենախանձ ժողովրդոց և ազգասէր հոգաբարձուաց.

Յ. Աղէքսանդրեանց

Ի 10 Ն Ադրիլ 1871 -ի
Ի Ք. Ն-էի.

ԹՕՓԱՌԼԻ

Լոմբարդո-Ռիեան Աբրաբամ ամսագրոյ

Ի վաղուց հետէ սիրտս մի անհամբեր տենչանոք լցուած հրապարակաւ կամենում էի յայտնելու իմ ուրախութիւն զգացմունքը. բայց գործոցս անընդհատ զբաղմունքը արգելարութիւն էր լինում շուտով կատարելու այդ. վերջապէս գտայ այս բարեպատեհ ժամը, որի մէջ իմ հնաւոր եղբարցս ի լուր ահա յիշում եմ այն ի վաղուց զգացածս բերկրութիւն ցնծութիւնը, որին նոքա ևս հաղորդակից լինին.

Անմահ բնութիւնը տեսանելով մեր թշուառ Ազգի խղճալի զրութիւնը, պարգևեց նորան Գէորգ Դ. Սրբազնասուրբ և Ուսումնասէր Հայրապետը, Վեհ. Հայրը Գահը բարձրանալուց հետէ անդուլ և անդադար աշխատում է լրացուցանելու նորա ամենահարկաւոր կարիքը, այն է Ուսումնական պակասութիւնը. Քաղաքների ուսումնարանների բարեկարգելուց զկնի այժմ գիւղերը ևս յետ չեն մնում այդ կարևոր գործից, ինչպէս Հսկողադէտ սուրբ Հովսի բարի կամքը անցեալ Նոյեմբեր ամսոյ մէջ իրագործուած տեսաւ նոյն առաջնական գործը Շիրակվանու Թօփառլի գիւղը ևս.

Հարկէ Վեհափառ Հայրը լաւ է հասկանում թէ ինչ է նշանակում "լաւ է անուն բարի քան զմեծութիւն աշխարհի" ասած բանը, և իսկապէս այդ դիտաւորութեամբ՝ իւր ամենաբարձր և զժուարատար պաշտօնը ընդունելուց հետէ աշխատում է տիւ և գիշեր անքուն հսկողութեամբ. Արդէն ժրաջան երկրագործը սերմանում է մեծ քրտնաթոր աշխատանօք, բայց ամենաստեղծն Աստուած անվարձ թողնելու չէ իւր ամենառատ գրութիւնից. անշուշտ իւր սերմանածը կատարելագործած տեսանելով՝ ուրախանալու է շատ.

Միևնոյն սերմերից ընկնելով Թօփառլի Հայազգի ժողովրդականաց մէջ, պտղաբերութեան արգասիք ունենալը, այժմէն ակն յանդիման երևում է, որ բաց արեցին Ուսումնարան երկու սենեակից բաղկացած, բերել տուին նաև ուսուցիչներ. չեմ մոռանալու նոյն գիւղացւոց մանաւանդ Տանուտէր Պ. Մանուկ Աբրահամեանի և նորա որդի Բաբկէնն Սարգիս քահանայի աշխատութիւնը, որոնք հայում են Վեհափառի բուն նպատակին, պարարև գովութեան արժանի են.